Գևորգ Էմին

Քո ինչին էր պետք այս հաղթանակը

Քո ինչին էր պետք այս հաղթանակը.
Ինչո՞ւ շարժեցիր հույզիդ բանա'կը,_
Հեծելազո'րը հաճո խոսքերի,
Հետախույզ գո’ւնդը հարց ու փորձերի,
Գորշ հետևա'կը քո համառության,
Ծխածածկո~ւյթը մերժման տխրության,
Խանդի դիրքերի ոլո’ր- մոլո~րը…_
Ասա', ինչի~դ էր պետք այդ բոլորը,
Երբ դու անառիկ այս սիրտը գերել՝
Սակայն չե~ս սիրում և չե~ս էլ սիրել,
Երբ անձնատո~ւր է նա վաղուց եղել,
Իսկ դու… ձանձրույթից արդեն սրտնեղե’լ,
Ե~տ ես քաշում քո հաղթած բանակը…
Քո ինչի~ն էր պետք այս հաղթանակը: